Արձանագրություն N 2

ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեհատի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի մասին

Գ. Ոսկեհատ **«09» Հուլիսի 2020թ.**
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝	**Հակոբ Մարգարյան – համայնքի ղեկավարի տեղակալ**
Հանձնաժողովի անդամներ՝	**Արթուր Կարոյան – Օպերատոր** **Սուսաննա Հովհաննիսյան - Հաշվապահ**
Գնումները համակարգող ՝	**Կարեն Հովսեփյան**

Օրակարգ

«ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Հակոբ Մարգարյան)

1. Գնման առարկայի նախահաշվայի գինը
2. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
3. «**ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/03**» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը, ներկայացված գնային առաջարկների հիման վրա «**ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/03**» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

1.Գնման առարկայի նախահաշվայի գինը

ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեհատ համայնքի կարիքների համար հայտարարված **ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/03** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նախահաշվային գինը կազմում է

ՀՀ դրամ

1	ՀՀ Ոսկեհատ համայնքի 1-ին և 3-րդ փողոցների գազաֆիկացման աշխատանքներ	14322990

2. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Հակոբ Մարգարյան)

2.1 ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեհատի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված **ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/03** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը և էլեկտրոնային հասցեն
«ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ	Ք.Երևան, Պռոշյան 1 նրբ. 62/2, հեռ. 096888833
«ԼԱՅՆ ՇԻՆ» ՍՊԸ	Ք.Երևան, Նոր Նորք ՎՇ, Գյուրջյան փ. 17շ. Թիվ 90, հեռ. 055444484

3. «ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Հակոբ Մարգարյան)

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմվել են հրավերի և ՀՀ «Գնումների մասին» օրենքի պահանջներին համապատասխան, բացառությամբ հետևյալ դեպքի.

- «ԼԱՅՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարի վրա բացակայում էր հայտը ներկայացնող անձի ստորագրությունը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետև՝ Օրենք/ 30-րդ հոդվածի 2-րդ մասի և սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.1 կետի Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը:

Համաձայն Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Հաշվի առնելով վերոնշյալը **«ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց** «ԼԱՅՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից հայտը մերժել:

Քանի որ հայտերի բացման նիստին ներկա էր նաև «ԼԱՅՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հետևաբար ներկայացված ծրարը նույնությամբ ետ է վերադարձվել մասնակցին:

«ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը, ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Հակոբ Մարգարյան)

4.1 «ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան մասնակիցը ներկայացրել է հետևալ գնային առաջարկը

Մասնակցի անվանումը	ինքնարժեքի և շահույթի հանրագումար	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գին
«ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ	**11637228,623**	**2327445,725**	**13964674,347**

Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

«**ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/03**» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի /ընտրված/ մասնակից ճանաչվեց «ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել «**ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/03**» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «**ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/03**» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Հակոբ Մարգարյան)

5.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0

6. Տեղեկություններ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Հակոբ Մարգարյան)

«**ՀՀԱՄ-ՈՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/03**» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ **Հակոբ Մարգարյան**

հանձնաժողովի անդամներ՝ _____ **Արթուր Կարոյան**

_____ **Սուսաննա Հովհաննիսյան**

Գնումները համակարգող՝ _____ **Կարեն Հովսեփյան**